

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԱԵՐ.

1. (Nennos) Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, herausg. A. Manandian, Marburg i. H. 1903.
2. Հայոց նոր լիաները (ժողովրդական հրատարակութիւն). հատոր Ա. և Բ. կազմ. Յ. Մանանդեանց և Հ. Աճառեան. Վաղարշապատ, 1902. գինը 1 ր.
3. Էլի մէկ զոհ (կոմեդիա 5 արարուածով).—Գ. Սուլեյմանեանց. Բ. տպ. (ուղղած). Թիֆլիզ, 1902. գինը 1 ր.
4. Զհուդ—Քուշան, լէպ Պարսկաստանի կեանքից (արտատպ. «Մուրճ» ամսագրից).—Շահրիար. Թիֆլիզ, 1902. գինը 1 ր.
5. Հայագիտութիւնը XX-րդ դարի սկզբում (արտ. «Մուրճ» ամսագրից). Ստ. Մալխասեանց:
6. Հօրոտ—Մօրոտ, պատկերներ իրական կեանքից (Բ. դերք). —Յ. Մալխասեան. Թիֆլիս, 1903. գինը 30 հ.
7. Վարժապետը,—Էդմոն Թեռի (ֆր. թարգմ. Լ. Կոն Մ. Ադ.). Թիֆլիզ 1902. գինը 5. հ.
8. Վարդապետ, Լեհաստանի Հայերի պատմութեան լերջին երեսը.—Dr. Antonius I. թարգմ. Մ. Բարխուդարեան. Բաքու, 1903. գինը 20 հ.
9. Մեծն Ներսէս (համառօտ կենսագրութիւն, 1 պատկերով)—կազմեց Ե. Թ. (Յայտնի մարդկանց կենսագրութիւններ. հրատ. Յ. Արամեանցի. № 6.) Ս. Պետերբուրգ, 1903. գինը 10 հ.
10. Հաղարան—Բլբուլ (ֆէէրիա, երեք արարուածով և չորս պատկերով. արտ. «Լուսնայ»-ից).—Յ. Թումանեան. Թիֆլիզ, 1903. գինը 30 հ.
11. Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց 1903 թ.-ի. տոմար. զանազան զիտելիքներ, լիճակ. տեղեկութիւններ, և լն. Կ. Պոլիս:
12. Օրացոյց 1903 թ.-ի. հրատ. Լ. Խան—Աղեանցի, Թիֆլիզ:
13. Հաշիւ նոր—Նախիջևանի հայազգի աղքատաց Եկեղեցական Հոգաբարձութեան. 1896—1901 տարեշրջանների դործունէութեան. Ն. Նախիջևան, 1902:
14. «Մուսա», պատմական պոէմ, նուագ. առաջին.—Յարութիւն Թումանեան. Թիֆլիս, 1902. գինը 20 հ.
15. «Նուագներ»,—նոյն. հեղ.-ի—Թիֆլիզ. 1902. գինը 30 հ.—Երեսուն և հինգ սիրային երգեր՝ մէկը միւսից աադադադի մի հատ տխուր հառաչ «աւերակների մէջ» և մի «պատմական պոէմ» «Դալի—Մահրասա»: Վերջինս ամէնից յաջողն

է և կարգացուում է հետաքրքրութեամբ: Լեզուն՝ բոլորի մէջ էլ բաւական մաքուր հայերէն է, ոճը՝ սահուն, բայց տեղ տեղ տափահ:

16. «Ամայի դաւեռում».—Մաքսիմ Գորկիյ. (Թարգմ. Սարգիս Մ. Իսահակեան). Ալեքսանդրապոլ. 1902, գինը՝ 5 կ.—Թարգմանութիւնը լի է օտարաբանութիւններով:
17. «Հիմնը երգ ու վերքերից».—հեղ. Ա. Իսահակեան, Բաղու. 1902, էջ՝ 24. գինը՝ 3 կ. Վերջեր շատ, երգ՝ երկու երեք հատ:
18. Ոտանաւորներ (երեսաների համար, 15 պատկերով)—Էմ. քահ. Նազարեանց. Մոսկուա, 1903. գինը 50 կ.
19. Հայոց եկեղեցու համառօտ պատմութեան դասագիրք (պետական միջն. դպրոցների դասընթացին յարմարացրած).—Յովհ. քահ. Մարտիրոսեան. Թիֆլիզ, 1903. գինը 40 կ.

Մի քանի խօսք վերջին երկու գրուածքների մասին:

Մեզանում գտնուած «երեսայական գրքոյկների» պակասը լրացնելու համար Հ. Նազարեան «վճռել է մի—երկու ոտանաւոր գրել—լրքե փորձ», և փորձը կատարելապէս յաջողել է. դուրս է եկել մի նմանը չեղած երեսայական գործ: Նորա գրքոյկից «յանգաւոր գրուածք» սիրող մանուկները կսովորեն, որ «Մարտը բերում մեզ սուրբ Զատիկի, Հեան էլ մի բունդ նաւակատիկը. Օգոստոսը՝ վեր երկնքում—Մաքուր Կոյսի վերափոխում. Հոկտեմբերը չունի ուրումնդ». Դեկտեմբերը ... ? «Հինգշաբթի օր, անունն Աւագ, Քահանաներ կանգնած բժմում՝ Սուրբ հանդէսով օրհնում կարագ, Տեսնողների խելքը տանում». Կսովորի որ «Ամէն աղգ էլ հէնց այդպէս՝ ունի լեզու իր համար, ինչպէս ունին լեզուներ «թէ բանական, թէ անբան և թէ ամէն անասուն». ևլն ևլն:—Եւ սակայն այդպիսի անհամութիւններ կլլել տալ մանուկների, որոնց կրթել ենք կամենում՝ ներելի չէ ո՛չ ոքի, որչափ և անմուռն լինի թուղթն ու տպագրական արուեստին հասցրած ամէն տեսակ անարգանք տանելու պատրաստ: Ձենք հասկանում մանաւանդ, թէ ինչպէս քահանայ հեղինակը թոյլ է տալիս իրեն վերաւորել աղօթքի սրբութիւնն այնպիսի աններելի խաղերով, ինչպէս. «Մէր Հայր, որ է՛ն բարձրումն ես, Մենք սրտեղ, Դու սրտեղ ես. Ինչ որ ուզենք, խնդրենք քեզ՝ Դու ամէն բան հասցրու մեզ:—Չմեռն ուղարկի՛ր փայտի դէղ ...».—Այդպէս պէտք է աղօթէ մանուկը:

Ո՛չ պակաս անհասկանալի է մեզ այն անսպառ եռանդը, որով մեր Արթ. կրօնուսոյցները դասագիրք դասագրքի ետեւից ի լոյս են ընծայում, կաշուից դուրս գալիս արար աշխարհին:

իմաց տալու թէ ինչպէս անասնելի կերպով ի չարն են
 գործ գրել իրենց նուիրական պաշտօնը: Ահա «Թիֆլիզի օրիոր-
 դական III դիմնագիծն» կրօնուսոյցն էլ՝ հաւատալով իւր աշա-
 կերտութիւններ խօսքերին, թէ հեշտութեամբ կպատրաստեն իրենց
 դասերը, եթէ Տէր Հայրը տայ նոցա «մի գիրք այնպիսի ըովան-
 դակութեամբ, ինչպէս որ ինքն է պատմում», — տալիս է իւր գիր-
 քը, որով և միջոց ուրիշ աշակերտութիւններ իւր խոր գիտու-
 թիւնից ու դաստիարակչական հմտութիւնից օգտուելու: Հայոց
 Եկեղեցու ճամառօս պատմութիւնը նա Քրիստոսից է սկսում
 և ամբողջ «Ա. շրջան»ը նուիրում առաքելների գործու-
 նէութեան՝ այնպիսի մանրամասնութիւններով, ինչպէս Մատա-
 թիայի ընտրութիւնը, ս. Փիլիպպոս (Քրիստոսի յարութեան
 ժամանակ երևի դեռ նորածին) առաքելի նահատակուելը
 «Տրայանոսի ժամանակ (96—117 թ.) ութսուն և եօթը տարե-
 կան հասակում»: Ապա բուն Հայոց եկոյ պատմութեան ան-
 ցնելով՝ այդտեղ ևս չի մոռանում ամբողջ գլուխներով այնպիսի
 կարեւորագոյն դէպքեր յիշել ընդհ. եկեղ. պատմութիւնից, ինչ-
 պէս «Սուրբ Խաչի գիւտը՝ Հեղինէ թագուհու բարեպաշտ ջանքով»:
 Թէոդոս Մեծ կայսեր անունն էլ Թէոդորոս է դնում ու Հայոց
 «Հայրապետական գահը վարել» տալիս միայն մինչև Ե. դարի
 վերջն եղած կաթողիկոսներին: Դորանից յետոյ՝ Տէր Հօր գի-
 տութեան թէ ճաշակի համաձայն, Հայոց եկեղեցին այլ ևս
 պատմութիւն չունի մինչև ԺԲ. դար. նա ստիպուած է լիով
 առնել դրսից «Քրիստոսի դաստառակի յայտնութիւնը», Ս. խա-
 չի գերութիւնը, և ինչ Ապա բարեհաճում է յիշել Ներսէս Շնոր-
 հալուն, Գրիգոր Տղային և Ներսէս Լամբրոնացուն, և իւր ուշա-
 դրութեան անարժան համարելով այնպիսի դէպքեր, ինչպէս Հայր.
 Աթոռի փոխադրութիւնը ս. Էջմիածին, այնպիսի հայրապետներ,
 ինչպէս Մովսէս, Փիլիպպոս, Սիմէոն — անցնում է անմիջապէս
 ԺԲ. դար: Այնուամենայնիւ կարևոր է համարում «Հայոց նշա-
 նաւոր վանքերի մասին» ևս համառօտ տեղեկութիւններ տալ, և
 թէպէտ այդ տեղեկութիւնների համար իւր ասելով «օգտուել
 է պ. Կ. Կոստանեանցի Հայոց վանքեր անունով գրքից» — մենք
 զարմանալի նորութիւններ ենք իմանում. վաճառ ծովի կղզիների
 վրայ բացի Աղթամարայ վանքից, Կոտուց և Լիմ անապատներից
 կայ եղել «և ս. Բարդուղիմէոս առաքելի վանքը»։ Իսկ Ս. Թա-
 դէոս առաքելի վանքը պարսկահայոց Մակու քաղաքի Աղբակ
 գաւառում, Արտաղու գաշտում է: — Եզրակացութիւն. ա) մի
 բան ուսուցանելուց առաջ ուսանել պէտք է. բ) շատ դասեր են
 աւանդուել և շարունակում են դժբաղդաբար աւանդուել գիմ-
 նապիտնի չորս պատերի մէջ, որ հրապարակ հանելն ամօթ է: